Սանասար մեռաւ։

Բերեցին Մհեր դրեցին ուրանց մեծ[1])։

Տղեկներ էղան եօթ ութ տարեկան։

Մհերին քեռասիրուտեն փակեց. էլաւ իրէք տղէն վերցուց ու գնաց ի Մըսր։

Զուր մկայ Մըսր Ասլիմելիքն էր նստուկ. Մհերի խորթ տղէն էլաւ Ասլիմելիքին սպանեց ու նստաւ Մըսր, էղաւ Մսրայ մելիք։

Մհեր առաւ ուր իրէք տղէն ու գնաց Մսրամելիքի կուշտ։

Ջուաբ տարան Մսրամելիքին թէ՝—Մհերն էկաւ։

Մսրամելիք լէ էլաւ մէկ թոփ կտաւ զարկեց ղոլթուղ ու թուր լէ թալեց վիզ ու գնաց Մհերի առէջ։

Ըսեց.—Մհեր, իմ քաղքին դագմիշ մ'էղնի. իդա իմ թուր, իդա իմ վիզ. զարկ, ըսեց, իդա թոփ կտաւ լէ փաթուս ընձի։

Մհեր ըսեց.—Զէ, քու քաղքին դագմիշ չըմ էղնի, ես էդ հաշուին չըմ էկեր ի։

—Ըբա ի՞նչ հաշուին ես էկի։

—Էկեր իմ, ըսեց, իմ իրէք տղէն տամ քըզի՝ պահիս, պահ-պանիս։

Մսրամելիք լէ ըսեց.—Ճապաղջուրն ու Քոդէն[2]) տուր, քու իրէք տղէն պահիմ։

Ըսեց.—Տուեցի։

Մսրամելիք տղեկներ իրէք լէ առաւ, գնաց։

---

[1]) Ա. վարիանտով Մհեր որսորդութեամբ և աշխարհակալութեամբ էր պարապում. «եբ օր ջոջցաւ (Մհեր), ավուխուշ կ'էնէր, կ'բերէր Սասունցոց վրէն կ'ցըրէր. եօթ տարի պահեց»։

Մհեր գնում է Ծովասարն ու Ճապըղջուկ—Քոդէն նուաճում և ժողովրդից հարկ է առնում։

[2]) Ա. վարիանտով Մսրամելիքը պահելու վարձ Ծովասարն ու Ճապաղջուկ-Քոդէն է ուզում։